

փոխելով իւր ընթացքի ուղղութիւնը։ Ասում են՝ աղուէսը պատուեց։ Թերեւս պոս անուամբ խաղ էլ գտնուի, ինչպէս են՝ թագրումէ արգոյ նորայր Բիւզանդացին։

ՄԻԱԲԱՆ

## ԱԶԳԱՅԻՆ

**ԶԵՅԹՈՒՆԻ ՀՐԿԻՎԵԼՈՂ յանձնաժողովը ԽԻՂ ՐՈՒՄ է Հրատարակել հետեւեալը.**

Յայտնի է արդէն՝ որ անցեալ տարւոյ Յուլիս ամսոյ մէջ ի ԶԵՅԹՈՒՆ պատահած աղէտալի հրդեհ մը աճիւն և աւերակ դարձուցած էր գրեթէ ամբողջ քաղաքն իւր եկեղեցիներով և վարժարաններով։

Մեր Օգոստակառ և հայրագորով Կայսրն, ի լուր այս աղետից, թշուառ հրկիղելոց ուտեսս և պատսպարան շնորհելու համար, հարկ եղած հրամաններն բարեհանձած էր տալ, որք ամրգեցին հրկիղելոց ցոււերն և հայ աղդն ինչպէս ամեն առմի մէջ, այս անդամ ևս առիթ ունեցաւ օրհնել իւր սիրեցեալ Աւհապետին անուն։

Ազգային Պատրիարքարանն ալ ի գահոյից կայսերական տրուած սոյն առաքինական օրինակին հետեւելով, փութաց կազմել զեանձնաժողովս, պաշտօն տալով նման վերաշինել այրացաւեր եկեղեցիներն և վարժարաններն։

Ուրախ եմք յայտարարել, թէ ի Տաճկաստան, ի Մանչեսթըր, ի Բարիղ և յայլ քաղաքս գտնուած մերազնեայք փութով պատսպիանեցին մեր հրաւերին և Ռուսաստանի ազգայինք ալ ըստ օրհնաձիր Կոնդակի Աւհափառ Հայրապետին մերց, իւրեանց առատ նուէլներն չզլացան մեզ։ և Յանձնաժողովս փութաց ի ԶԵՅԹՈՒՆ դրկել իբր Պատուիրակ՝ Գոյումձնեան Մեծ. Քերովք Էֆէնտին, որ առանց որ և է փօխարինութեան, ստանձնեց սոյն կարի ծանր պաշտօնն և նորա անձնուէր և անխոնջ ջանից շնորհիւ կարելի եղաւ սուլ միջոցի մէջ վերաշինել։

Ա. 2որս եկեղեցիք, Ա. Լուսաւորիչ. Ա. Յովհաննէս. Ա. Սարգիս և Ա. Աստուածածին։

Բ. Մէկ մեծ վարժարան քաղաքին կեդրոնն, հիմնայատակ եղած Ա. Յակոբ Եկեղեցւոյ գետնոյն վերայ, այնպիսի ընդարձակ, բարձր և հոյակապ որոյ նմանն ոչ թէ ի ԶԵՅԹՈՒՆ այլ և մօտակայ քաղաքաց մէջ իսկ չգտնուիր։

Գ. Երկու ծաղկոց Ա. Սարգսի թաղն. նմանապէս երկու ծաղկոց Ա. Լուսաւորչայ թաղն։

Դ. Մի վարժարան Ա. Աստուածածնայ թաղն։

Ե. Մի վարժարան Զէյթունէն երև ժամ հեռու Արեգնայ Վարդանան գիւղն.

Զ. Մի եկեղեցի ի Խեղի գիւղ և մի եկեղեցի ի Տէտէ գիւղ.

Է. Երկու լուսատեղի մին Ս. Աստուածածնայ թաղն և միւսն Պօզ պահի թաղն.

Ը. Երկու աղբիւր մին Ս. Աստուածածնայ թաղն և միւսն Ս. Լուսաւորչայ թաղն:

Սոյն եկեղեցիներու և վարժարանաց մէջ թէկ եկեղեցական արարողութիւնք և դասախոսութիւնք կը կատարուին այսօր, սակայն վերահաս ձմրան պատճառաւ մի քանին չեն կրցած կատարելագործուիլ:

Կիւյյս եմք որ ի գարնան, հետզիւտէ հասնելիք հանգանակութեանց արդինքով պիտի կարենան շինուիլ և ամբողջանալ:

Սոյն ազգային հաստատութեանց վերաշինութեան զատ, Յանձնաժողովս մօտակայ քաղաքներէն 35000 օխայ ցորեան գնել տալով՝ դրամական նպաստից հետ բաշխել տուաւ զայնս կարօտելոց՝ որը ամառուան երաշտութեան սովութիւնք մատնուելու վտանգին մէջ կդտնուէին. բաց աստի Մարտաշէն մի բժիշկ բերել տալով և հարկ եղած գեղօրայք զրկելով հրկիզելոց առողջական վիճակն դարմանեց և շատ մը համաձարակ հիւանդութեանց առաջքն կարող եւ, աւ առնուլ:

Այս ամեն օգնութիւնք հրկիզելոց ընձեռած ժամանակ Յանձնաժողովս տանց շինութեան համար թէկ յատկապէս նպաստներ բաժնեց, բայց այս օգնութիւնք աննշան մի արդիւնք պիտի ունենային եթէ նորին Կայսերական ԱԵՀափառութիւնն իւր անսպառ ողորմածասիրութեամբ յօգնութիւն փութալ չը բարեհաձեր: Երկու անդամուն ընդամենն 3000 ոսկի բաշխել տուաւ, որ բարդուելով Յանձնաժողովոյս յատկացուցած նպաստից, մեր պատուիրակին հսկողութեամբ և աջակցութեամբ կարելի ըրաւ հրկիզելոց վերաշինել իւրեանց տնակներն:

Այժմ 450 էն աւելի տուներ շինուած կան, և մնացորդաց համար թէկ դրամ տրուած է, այլ գարնան պիտի կարենան շինուիլ. միայն թէ ուրախալի է որ ձմրան դանակի մէջ ամեն ոք պատսպարուած և ոչ ոք մնացած է բացօդեայ:

Ո՞րչափ շնորհապարտ լինելու եմք վերին նախախնամութեան որ կը գտնուիմք նորին Կայսեր. ԱԵՀափառութեան Ապտիւլ - Համիտ Կայսեր հայրական հօվանաւորութեան ներքեւ, որ իւր հպատակաց անդորրութիւնն ու երջանկութիւնն իւր յարաժամ մտադրութեանց առարկայ ընելով, երբէք չդադրիր ամէն առթի մէջ իւր անբաւ գմասրտութեան լիուլի ապացուցներն տալ:

Ազգին իրաւացի հետաքրքրութիւնն յագեցնելու համար, սոյն համառօտ տեղեկութիւններն հաղորդելով, Յանձնաժողովս իւր համարատուութեան պարտքն լրացուցած չհամարեր երբէք: Երբ հանգանակութիւնք վերջանան և գոյացեալ արդիւնքով շինութիւնք աւարտին, Յանձնաժողովս պիտի փու-

Թայ Ազգ- Կեդր. վարչութենէն վասերացեալ մի տեղեկագրով հաշիւն տալ այն դրամոց, որբ այնչափ առատաձեռնութեամբ շնորհուեցան ի նպաստ հըր կիզեւց ԶԵՐԹունի:

Ի դիմաց Յանձ. Վերաշ. Ազգ. Հրկիզ. հաստատ. ԶԵՐԹՈՒՆԻ.

Ատենադպիր

Ատենապետ

Մկրտիչ Ս. Մանուկեան.

Պատրիկ Ս. Կիւլպէնկեան.

/, Մարտ 1888 Կ. Պոլիս.

Մայր Աթոռումն կատարուած շինութեանց և վերանորոգութեանց գործը բաւական արագ յառաջ է ընթանում: Նոր Ցպարանի հիմքերն արդէն ձգուած և վերջացած են, պատերը առշինաչափ բարձրացել են արդէն: Մայր տաճարի եռաստիճան խարխալեալ պատուարը քանդուած է և նոր պապատուարը սաժէնաչափ բարձրութեամբ կիսով չափ չինուած: Տաճարի շուրջը, վանքի ընդարձակ բակը, որ եկեղեցու յատակից բարձր էր առշինաչափ, ցածրացած է 1—1 ½ արշին և բոլոր հողը, որ լիցք էր, գուրս է կրուած մեծ պարսպից դէպի անտառի գլուխը:

Նորին Օծութեան Վեհափառ Հայրապետի՝ Սրբոյն Լուսաւորչի Գահը բարձրանալու օրից, գլխաւոր մոտածմունքներից մէկն էր Մայր Աթոռոյս Տաճարի վերանորոգութեան գործը: Գեր. Առաջնորդները նաև Ամենապատիւ Կ. Պոլոսի և Երուսաղէմի պատրիարքը անտեղեալ չէին նորին Վեհափառութեան գիտաւորութեանց, ուստի և 1886 թուականից սկսան զանազան կողմերից ինժնաբէրաբար նուիրատւութիւններ առաքուել Աթոռս ի նպաստ ամենեցուն սրաի մօտիկ Ս. Տաճարի վերանորոգութեան: Հասկանալի է Հարկաւ, որ Հայ եկեղեցիքն էլ իւրեանց կարողութեան համեմատ անմասն չէին մնալու Մայր Եկեղեցոյ վերաբինութեան գործին: Եւ ահա այսօր թէե պաշտօնապէս ոչ մի ժողովարարութեան չէ ձեռնարկուած գեռ և յօգուտ և ի նպաստ այս մեծ գործին, սակայն Հայ ժողովուրդն ու Հայ եկեղեցիք շտապել են իրենց լիառատ նուէրները առաքել Մայր Աթոռս, որ և ապացոյց է Հայ ազգի բուռն սիրուն դէպի Ս. Էջմիածին և նորա մշտավառ ջերմեռանդութեանը: